ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՔԱՏԱՐ

IOM • OIM

IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՔԱՏԱՐ

IOM • OIM

IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն

ՄՄԿ

Սույն ուղեցույցը հրատարակվել է Իտալիայի Կառավարության ֆինանսավորմամբ:

Հեղինակ՝ Նունե Ասատրյան

© **Հեղինակային իրավունքը պաշտպանված է**: Սույն հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահպանվել որոնողական համակարգում կամ փոխանցվել էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանման, ձայնագրման կամ այլ եղանակով առանց հեղինակի և հրատարակչի նախնական գրավոր թույլատվության:

*****

Սույն հրատարակությունում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել ՄՄԿ-ի կամ նրա անդամ-պետությունների պաշտոնական տեսակետների հետ:

*****

Հրատարակիչ՝ Միգրացիայի միջազգային կազմակերպություն

Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն
Հայաստան • Երևան 0010 • ՄԱԿ-ի գրասենյակ
• Պետրոս Ադամյան փողոց 14, 1-ին հարկ
Հեռ.՝ (+374 10) 58 56 92 • 58 37 86 • Հեռապատճեն՝ (+374 10) 54 33 65
• Էլ.փոստ՝ iom@arminco.com • http://www.iom.int/armenia

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մուտքի ընդհանուր պայմանները
և տեղեկություններ վիզայի մասին 5
2. Միգրացիա զբաղվածության նպատակներով 9
3. Կրթությունը Քատարում 15
4. Ապաստանի տրամադրման ընթացակարգը 20
5. Առողջապահական համակարգը 20
6. Սոցիալական ապահովագրության համակարգը 21
7. Բնակարանների վարձակալություն 21
8. Դիպլոմների ճանաչում 22
9. Օգտակար խորհուրդներ
Քատար մեկնողների համար 22
10. Միգրանտներին աջակցող ծառայություններ 24

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՔԱՏԱՐ

1. Մուտքի ընդհանուր պայմանները և տեղեկություններ վիզայի մասին

Քատարի Պետություն այցելելու համար անհրաժեշտ է ունենալ վիզա: Կան երկրներ, որոնց քաղաքացիները կարող են վիզա ստանալ Դոհայի օդակայանում: Այդ երկրներն են՝ Ռուսաստանի Դաշնությունը, ԱՄՆ, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիան, Կանադան, Ավստրալիան, Նոր Զելանդիան, Ճապոնիան, Նիդերլանդները, Բելգիան, Լյուքսեմբուրգը, Շվեյցարիան, Ավստրիան, Շվեդիան, Նորվեգիան, Դանիան, Պորտուգալիան, Իռլանդիան, Հունաստանը, Ֆինլանդիան, Իսպանիան, Մոնակոն, Վատիկանը, Իսլանդիան, Անդորրան, Սան Մարինոն, Լիխտենշտեյնը, Բրունեյը, Սինգապուրը, Մալազիան, Հոնգ Կոնգը, Հարավային Կորեան:

Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Մոլդովայի, Տաջիկստանի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի, Ուկրաինայի քաղաքացիներին Դոհայի օդակայանում վիզա չի տրամադրվում: Այդ երկրների քաղաքացիները պետք է ձևակերպեն վիզան Քատարի դեսպանատանը կամ հյուպատոսական ծառայություններում: ՀՀ քաղաքացիները կարող են ստանալ վիզա Արաբական Միացյալ Էմիրություններում ՀՀ դեսպանատնից:

Վիզաները պետք է թարմացնել յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ: Քատարի և Օմանի միասնական վիզաները կարող են օգտագործվել երկու պետությունների մուտքի համար, սակայն երրորդ երկիր մուտք գործելու համար անհրաժեշտ է նոր վիզա:

Քատարի Պետության դեսպանատունը արագացված ծառայություններ չի մատուցում և դիմումների համար լրացուցիչ վճարներ չի գանձում: Անձնագրերն ու դիմումները պետք է հանձնել երկուշաբթիից հինգշաբթի օրերին, 9:30 – 12:30: Դիմումի ձևը պետք է ընթեռնելի կերպով լրացված լինի, որին պետք է կցել 2 անձնագրի չափի գունավոր լուսանկար, անձնագիրը, անձնագրի լուսապատճենը, հրավերը (տուրիստական վիզայի համար), կազմակերպության նամակը (բիզնես վիզայի համար),

կամ մուտքի նպատակի նկարագրություն (անհատական այցելության համար): Դիմողի անձնագիրը պետք է Քատարում մնալու տևողությունից առնվազն 6 ամսով ավելի տևողությամբ վավեր լինի:

Քատարը Ծոցի այն քիչ պետություններից է, որը չի խոչընդոտում այն անձանց մուտքին, որոնք այցելել են Իսրայել, կամ Իսրայելի քաղաքացիներ են:

Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝
http://www.moi.gov.qa/site/arabic/departments/PassportDept/resources/2008/02/03_6134.pdf

Վիզայի տեսակները

Ընտանեկան վիզա
Այս ծառայությունը թույլ է տալիս Քատարում աշխատողներին իրենց ընտանիքի անդամներին բերել Քատար կամ երկարացնել իրենց ընտանիքի անդամների կացության վիզաները:

Ընտանեկան այցելությունների վիզա
Այս վիզաները տրվում են Քատարում բնակվող անձանց ընտանիքի անդամներին կարճաժամկետ՝ մինչև մեկ ամիս, այցելության նպատակով: Այն դեպքում, երբ ընտանիքի անդամը ցանկանում է մեկ ամսից ավելի ժամանակով մնալ Քատարում, նա պետք է մինչև մեկ ամսվա ժամկետի ավարտը ենթարկվի բժշկական զննության: Դրանից հետո, վիզան կարող է երկարացվել մինչև 5 ամիս ժամկետով ընտանիքի անմիջական անդամների համար /հայր, մայր, քույր, եղբայր, երեխաներ/ և երկու ամսով այլ բարեկամների համար:

Բիզնես վիզա
ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Գերմանիայի, Կանադայի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, Ճապոնիայի, Նիդերլանդների, Բելգիայի, Լյուքսեմբուրգի, Շվեյցարիայի, Ավստրիայի, Շվեդիայի, Նորվեգիայի, Դանիայի, Պորտուգալիայի, Իռլանդիայի, Հունաստանի, Ֆինլանդիայի, Իսպանիայի, Մոնակոյի, Վատիկանի, Իսլանդիայի, Անդորրայի, Սան Մարինոյի, Լիխտենշտեյնի, Բրունեյի, Սինգապուրի, Մալազիայի, Հոնգ Կոնգի և Հարավային Կորեայի քաղաքացիները կարող են միանգամից ստանալ բիզնես վիզա Քատարի սահմանին: Դրա համար որևէ ձեռնարկություն կամ ճանաչված հաստատություն պետք է դիմում ներկայացնի Ներգաղթի վարչությանը:

Վիզան վավերական է երկու շաբաթ և կարող է նորացվել ևս երկու շաբաթով:

Պարսից ծոցի երկրների քաղաքացիների վիզա
Տրվում է միայն Ծոցի երկրների քաղաքացիներին 14 օր տևողությամբ՝ Քատարի ցանկացած սահմանի մոտ: Այն կարող է երկարացվել ևս 14 օրով: Նախապայման է հանդիսանում Ծոցի երկրներից որևէ մեկի վավեր անձնագիր ունենալը:

Վիզա Պարսից ծոցի երկրների քաղաքացիներին ուղեկցողների համար
Տրվում է Քատարի ռեզիդենտների վարորդներին կամ ծառաներին սահմանի մոտ, երբ նրանք ժամանում են Ծոցի երկրներից որևէ մեկից, 1 ամսյա ժամկետով և կարող է երկարացվել մինչև 5 ամիս: Հատուկ պայմաններ են գործում Ծոցի երկրներից մեկի վավեր անձնագիր ունեցող քաղաքացիների համար, կամ հովանավոր ընտանիքի անդամներից մեկի կնոջ կամ երեխաների համար:

Բազմակի մուտքի վիզա
Բազմակի մուտքի վիզաներ՝ մեկ տարուց ավելի վավերականությամբ, տրվում են այն անհատներին, կազմակերպություններին կամ պետական կառույցներին, որոնք ունեն իշխանությունների հատուկ երաշխավորությունը:

Պաշտոնական վիզա
Սա նախարարությունների կամ կառավարական մարմինների պահանջով տրվող անվճար վիզա է: Այն տրվում է 1 ամսով, սակայն կարող է երկարացվել մինչև 5 ամիս՝ բժշկական զննություն անցնելուց և մատնահետքեր հանձնելուց հետո:

Զբոսաշրջային վիզա
ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Գերմանիայի, Կանադայի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, Ճապոնիայի, Նիդերլանդների, Բելգիայի, Լյուքսեմբուրգի, Շվեյցարիայի, Ավստրիայի, Շվեդիայի, Նորվեգիայի, Դանիայի, Պորտուգալիայի, Իռլանդիայի, Հունաստանի, Ֆինլանդիայի, Իսպանիայի, Մոնակոյի, Վատիկանի, Իսլանդիայի, Անդորրայի, Սան Մարինոյի, Լիխտենշտեյնի, Բրունեյի, Սինգապուրի, Մալազիայի, Հոնգ Կոնգի և Հարավային Կորեայի քաղաքացիները կարող են ստանալ այս վիզան Դոհայի միջազգային օդակայանում: Վիզան տրվում է 24 ժամվա ընթացքում՝ 14 օր տևողությամբ: Այն կարող է երկարացվել ևս 14 օրով: Զբոսաշրջային վիզա ունեցողներն իրավունք չունեն Քատարում աշխատելու:

Վիզան ստանալու համար անհրաժեշտ է դիմում ներկայացնել Քատարի ներգաղթի վարչության օդակայանի վիզաների բաժին: Դիմումը պետք է ներկայացնել միայն Քատարում գրանցված հյուրանոցներից որևէ մեկի միջոցով:

Այլ երկրների քաղաքացիները պետք է ձևակերպեն վիզան Քատարի դեսպանատանը կամ հյուպատոսական ծառայություններում: ՀՀ քաղաքացիները կարող են ստանալ վիզա Արաբական Միացյալ Էմիրություններում ՀՀ դեսպանատնից:

Աշխատանքային վիզա
Տրվում է մասնավոր ձեռնարկություններին, ընկերություններին և անհատ հովանավորներին և պետք է հաստատվեն ներքին գործերի նախարարության կողմից: Այս կարգի վիզաների համար վճարում են հովանավորները:

Կանանց և երեխաների երկարաժամկետ վիզաներ
Այս կարգի վիզաները տրվում են մեկ տարուց ավելի ժամկետով Քատարի այն ռեզիդենտների կանանց և երեխաներին, ովքեր աշխատում են կառավարությունում, մասնավոր ընկերություններում կամ քաղաքացիական ծառայողներ են: Վիզաները հաստատվում են ժամանողների հարցերով մշտական հանձնաժողովի կողմից:

Նորածինների վիզա
Տրվում է մինչև 3 ամսական նորածին երեխաներին՝ Քատարի սահման ժամանելուն պես: Ծնողը պետք է ներկայացնի երեխայի ծննդյան վկայականի բնօրինակը, և երեխան պետք է ունենա անձնագիր, կամ երեխայի անունը պետք է գրանցված լինի ծնողի անձնագրում: Երեխայի ծնողները պետք է ունենան վավեր կացության վիզա Քատարում, և մայրը պետք է գտնվի երեխայի հոր հովանավորության տակ: Այս կարգի վիզաները տրվում են անվճար:

Տարանցիկ վիզա
Կիրառելի է միայն այն հատուկ դեպքերում, երբ ճանապարհորդները պետք է մնան Քատարում 2 օրից ավելի: Սա չի վերաբերում տարանցիկ ուղևորներին, ովքեր պետք է մնան Քատարում 6 ժամից ավելի, մինչև նրանց մեկնումը երրորդ երկիր՝ համաձայն իրենց թռիչքի նախնական գրաֆիկի:

2. Միգրացիա զբաղվածության նպատակներով

Քատարի բնակչության շուրջ 70 տոկոսը աշխատանքային միգրանտներ են հարևան արաբական երկրներից, Հնդկաստանից, Պակիստանից, Շրի-Լանկայից, Ֆիլիպիններից, Մալազիայից, Նեպալից և այլն:

Քատարում աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են 2004թ. Քատարի պետության էմիր Համադ Բին Խալիֆա Ալ-Թանիի կողմից ընդունված Քատարի աշխատանքային օրենքով:

Համաձայն այդ օրենքի Հոդված 23-ի, Քատարի քաղաքացի չհանդիսացող աշխատողները չեն կարող ընդունվել աշխատանքի այլ կերպ, քան Քաղաքացիական ծառայության և բնակարանաշինության նախարարության աշխատանքի դեպարտամենտի **հավանությունը** ստանալուց հետո և նախարարության կողմից սահմանված կանոնների և ընթացակարգերի համաձայն երկրում **աշխատանքի թույլտվություն** ստանալուց հետո:

Աշխատանքի թույլտվություն Քատարի քաղաքացի չհանդիսացող անձին տրվում է հետևյալ պայմանների առկայության դեպքում.

1. դեպարտամենտի ռեգիստրում չկա համապատասխան որակավորում ունեցող գրանցված քատարցի աշխատող, որ կկատարի աշխատանքը, որի վերաբերյալ կիրառվում է աշխատանքի թույլտվությունը.
2. աշխատանքի թույլտվության համար դիմող Քատարի քաղաքացի չհանդիսացող անձը ունի կացության/բնակության թույլտվություն.
3. Քատարի քաղաքացի չհանդիսացող անձը առողջապես պիտանի է աշխատանքին:

Աշխատանքի թույլտվության ժամկետը սահմանափակվում է կացության թույլտվության ժամկետով, որպեսզի այն չգերազանցի հինգ տարվա ժամկետը, եթե դեպարտամենտի կողմից հաստատված չէ այլ ժամկետ:

Քաղաքացիական ծառայության և բնակարանաշինության նախարարը կարող է անվավեր ճանաչել Քատարի քաղաքացի չհանդիսացող աշխատողին տրված աշխատանքի թույլտվությունը հետևյալ դեպքերում.

1. աշխատողը չի բավարարում սույն օրենքի Հոդված (23)-ում նշված (2) կամ (3) կետերից որևէ մեկի պայմանները.

2. աշխատողը դադարեցնում է աշխատանքը երեք ամսից ավելի ժամանակով՝ անձնական որևէ պատճառով և առանց ընդունելի պատճառաբանության.
3. աշխատողն աշխատում է մեկ այլ գործատուի մոտ և ոչ այն գործատուի, ում մոտ աշխատելու համար է նրան տրվել աշխատանքի թույլտվությունը.
4. աշխատողը արձակվում է աշխատանքից կարգապահական հիմքերով:

Քատարի քաղաքացի չհանդիսացող աշխատողների և քատարցի աշխատողների հարաբերակցությունը սահմանվում է նախարարի որոշմամբ՝ աշխատանքի յուրաքանչյուր տեսակի վերաբերյալ: Նախարարը կարող է արգելել Քատարի քաղաքացի չհանդիսացող աշխատողների ներգրավումը որևէ ոլորտում՝ հիմնվելով հանրային շահի վրա:

Օտարերկրացի փորձագետների կամ տեխնիկական մասնագետների վարձած գործատուն ապահովում է համապատասխան քանակությամբ քատարցի աշխատողների ուսուցում, որպեսզի դեպարտամենտը նրանց նշանակի այն աշխատանքին, որ իրականացվում է օտարերկրացի փորձագետների կամ տեխնիկական մասնագետների կողմից, կամ էլ նրանց համար ներգրավվում են քատարցի օգնական աշխատակիցներ՝ ուսուցում անցնելու և փորձ ձեռք բերելու նպատակով:

Աշխատողի աշխատանքի դադարեցման դեպքում գործատուն իր հաշվին աշխատողին վերադարձնում է այն վայրը, որտեղ նրան վարձել է սկզբում կամ որևէ այլ տեղ՝ կողմերի փոխհամաձայնությամբ: Գործատուն **ոչ քատարցի** աշխատողների վերադարձման հարցերը պետք է ավարտին հասցնի պայմանագրի ժամկետը սպառվելուց հետո ոչ ավել քան երկու շաբաթվա ընթացքում: Եթե աշխատողը մինչև մեկնելը աշխատանքի է տեղավորվում այլ գործատուի մոտ, ապա իր երկիր կամ որևէ այլ վայր վերադարձնելու պարտավորությունն անցնում է վերջին գործատուին:

Գործատուն մահացած աշխատողի ժառանգների պահանջի դեպքում պարտավոր է հոգալ մահացածի դին պատրաստելու ու նրա երկիր կամ բնակության վայր հասցնելու ծախսերը:

Եթե գործատուն աշխատողի հայրենադարձումը կամ մահացածի դին ուղարկելու հարցերը չի հոգում, ապա Դեպարտամենտը կարող է դա անել գործատուի հաշվին՝ **ծախսերը վերջինիցս ստանալով վարչական միջոցներով:**

Համաձայն Քատարի աշխատանքային օրենքի 61 հոդվածի գործատուն աշխատողին կարող է առանց նախապես ծանուցելու արձակել աշխատանքից և չվճարել արձակման նպաստը հետևյալ դեպքերում՝

1. Աշխատողը ներկայացրել է ինքնության ու ազգության մասին կեղծ տվյալներ կամ կեղծ տեղեկանքներ և փաստաթղթեր.
2. Աշխատողը կատարում է այնպիսի արարք, որը գործատուին մեծ ֆինանսական կորուստ է պատճառել, պայմանով որ գործատուն միջադեպի մասին տեղեկանալուց հետո 24 ժամվա ընթացքում այդ մասին տեղյակ է պահել դեպարտամենտին.
3. Աշխատողը մեկից ավել դեպքերում թույլ է տալիս աշխատողների ու հիմնարկության անվտանգության ապահովման հետ կապված գործատուի գրավոր հրահանգների խախտումներ, չնայած խախտման մասին գրավոր նախազգուշացմանը, պայմանով որ այդ գրավոր հրահանգները կան և փակցված են տեսանելի վայրում.
4. Աշխատողը մեկից ավել դեպքերում թերանում է աշխատանքային պայմանագրով կամ սույն օրենքով սահմանված իր էական պարտականությունների կատարման մեջ, չնայած այս մասին գրավոր նախազգուշացում ստանալուն.
5. Աշխատողը բացահայտում է իր աշխատած հիմնարկության գաղտնիքները.
6. Աշխատողը աշխատանքի ժամին լինում է հարբած վիճակում կամ թմրամիջոցների ազդեցության տակ.
7. Աշխատողը ֆիզիկական ուժ է կիրառում գործատուի անձի, կառավարչի կամ իր աշխատանքային վերադասներից մեկի նկատմամբ աշխատանքի ընթացքում կամ աշխատանքին առնչվող պատճառներով.
8. Աշխատողը կրկնում է ֆիզիկական ուժի գործադրումն իր գործընկերների նկատմամբ՝ չնայած դրա վերաբերյալ գրավոր նախազգուշացում ստանալուն.
9. Աշխատողը 7 օր հաջորդաբար կամ տարվա մեջ 15 օր անհարգելի բացակայություն է ունենում:

10. Աշխատողը դատապարտվում է անբարոյականության և անազնվության հետ կապված հանցանքի համար:

Աշխատանքային պայմանագրերը կնքվում են 3 օրինակից՝ արաբերեն լեզվով, սակայն անհրաժեշտության դեպքում կարող են թարգմանվել այլ լեզուներով: Հակասությունների դեպքում գերակա է արաբերենը: Աշխատանքային պայմանագիրը կնքվում է գրավոր, հաստատվում է դեպարտամենտի կողմից և բաղկացած է երեք օրինակից՝ մեկական օրինակ տրվում է յուրաքանչյուր կողմին, իսկ երրորդը՝ դեպարտամենտին: Աշխատանքային պայմանագիրը սահմանում է երկու կողմերի միջև աշխատանքային հարաբերությունների պայմանները և մասնավորապես ներառում է հետևյալը՝

- գործատուի անունը և նրա գործունեության հասցեն,
- աշխատողի անունը, որակավորումը, ազգությունը, մասնագիտությունը, բնակության հասցեն և ինքնության հաստատման համար անհրաժեշտ ապացույցներ,
- պայմանագրի կնքման ամսաթիվը,
- աշխատանքի բնույթն ու տեսակը և պայմանագրի կնքման վայրը,
- աշխատանքի մեկնարկի ամսաթիվը,
- պայմանագրի ժամկետը, եթե այն ստույգ տևողություն ունի,
- համաձայնեցված աշխատավարձը և դրա վճարման մեթոդն ու ժամկետը:

Եթե աշխատանքային պայմանագիրը չի կնքվել գրավոր ձևով, ապա աշխատողը կարող է ապացուցել աշխատանքային հարաբերությունները և այն իրավունքները, որոնք բխում են դրանցից, ապացուցման ցանկացած եղանակով:

Աշխատանքային պայմանագիրը կարող է նախատեսել դրույթ փորձաշրջանի մասին, որը համաձայնեցվում է երկու կողմերի միջև պայմանով, որ փորձաշրջանը չգերազանցի վեց ամիսը: Աշխատողը միևնույն գործատուի մոտ չի կարող մեկից ավել փորձաշրջան անցնել: Գործատուն պայմանագիրը կարող է լուծել փորձաշրջանի ընթացքում, եթե համոզվում է, որ աշխատողն ընդունակ չէ աշխատանքը կատարելու,

և այն պայմանով, որ գործատուն այդ մասին տեղեկացնում է աշխատողին արձակելուց առնվազն երեք օր առաջ:

Սովորաբար առավելագույն աշխատանքային ժամերը Քատարում սահմանվում են շաբաթական 40 ժամ՝ օրական 8-ական ժամ, բացառությամբ ռամադան ամսի, որի ընթացքում առավելագույն աշխատանքային ժամերը կազմում են 36 ժամ՝ օրական 6-ական ժամ: Աշխատողն իրավունք ունի վճարովի շաբաթական հանգստի, որը պետք է կազմի առնվազն 24 հաջորդական ժամ և բոլոր աշխատողների համար ուրբաթ օրը սահմանվում է որպես վճարովի շաբաթական հանգստի օր, բացառությամբ հերթափոխային աշխատողների:

Աշխատողն իրավասու է տարվա ընթացքում ունենալ հետևյալ ազատ օրերը՝ աշխատավարձի ամբողջական պահպանմամբ.

1. երեք աշխատանքային օր՝ փոքր բայրամի առիթով
2. երեք աշխատանքային օր՝ մեծ բայրամի առիթով
3. մեկ աշխատանքային օր՝ անկախության օրվա առիթով
4. երեք աշխատանքային օր՝ գործատուի սահմանմամբ:

Մեկ տարվա անընդմեջ ստաժ ունեցող աշխատողն իրավասու է օգտվել ամենամյա վճարովի արձակուրդից: Մինչև հինգ տարվա ստաժ ունեցող աշխատողների համար սահմանվում է երեք շաբաթից ոչ պակաս արձակուրդ, իսկ հինգ տարուց ավել ստաժ ունեցողների համար՝ չորս շաբաթ: Աշխատողն իրավասու է օգտվել արձակուրդից ոչ ամբողջ տարվա ստաժի դեպքում՝ համամասնեցված ըստ ստաժի:

Աշխատանքային վեճերը լուծվում են աշխատանքի վարչությոան կողմից: Եթե վարչության միջոնդությունը չի հանգեցնում վեճի լուծմանը, ապա գործը ներկայացվում է հաշտեցման հանձնաժողովի քննությանը: Հանձնաժողովի որոշումը կողմերի համար իրավական ուժ ունեցող որոշում կլինի, եթե կողմերը վեճը հանձնաժողովին ներկայացնելիս գրավոր համաձայնության են եկել այդ մասին, իսկ եթե այդպիսի համաձայնություն չկա, վեճը ներկայացվում է արբիտրաժային հանձնաժողովին, որը 15 օրվա ընթացքում կայացնում է կողմերի համար իրավական ուժ ունեցող վերջնական որոշում:

Քատարում տասնվեց տարին չլրացած երեխաները չեն կարող աշխատանքի ընդունվել որևէ տեսակի աշխատանքում և իրավունք չունեն մուտք գործել որևէ աշխատավայր:

Աշխատող կնոջը վճարվում է տղամարդուն վճարվող աշխատավարձին համարժեք աշխատավարձ, եթե նա կատարում է նույն աշխատանքը և նա օգտվում է ուսուցման ու առաջխաղացման նույն հնարավորություններից, սակայն կանայք չպետք է աշխատեն դժվար, ծանր աշխատանքներում, նրանց առողջության, հոգեվիճակի համար վնասակար կամ նախարարի որոշմամբ նախատեսված աշխատանքներում:

Արհեստակցական միությունների կարող են անդամակցել և տարբեր վերապատրաստումների կարող են մասնակցել **միայն Քատարի քաղաքացի հանդիսացող աշխատողները:**

Քատարի Աշխատանքային օրենքին կարող եք ծանոթանալ հետևյալ կայքէջում՝ http://www.qatarembassy.net/Qatar_Labour_Law.asp

Քատարի Պետության կառավարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախատեսում են կնքել համաձայնագիր Քատարի Պետության տարածքում Հայաստանի Հանրապետության աշխատուժի օգտագործման մասին: Համաձայնագրի կնքումը հնարավորություն կտա կանոնակարգել աշխատանքային միգրացիան դեպի Քատարի պետություն, կերաշխավորի Քատարում ՀՀ քաղաքացի հանդիսացող աշխատանքային միգրանտների իրավունքների պաշտպանությունը:

Համաձայնագրի իրականացման ընթացքը համակարգելու նպատակով Քատարի Պետության կառավարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությունը կստեղծեն միացյալ հանձնաժողով, որը իրավասու կլինի մեկնաբանել Համաձայնագրի դրույթների վերաբերյալ վեճերը և հարթեցնել իրականացման ընթացքում առաջացած տարաձայնությունները և քննարկել Քատարի Պետությունում հասանելի աշխատանքային հնարավորությունները՝ ներառյալ ընդհանուր տեղեկատվության տրամադրում Քատարի Պետությունում զարգացման ծրագրերի, դրանց հետ կապված պոտենցիալ աշխատանքային հնարավորությունների, աշխատանքի տեսակների ու կարգերի, և անհրաժեշտ հմտությունների, և դրանց

օգտագործման Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պատրաստակամության մասին:

Աշխատանքի որոնման կայքեր

http://www.onlineqatar.com/jobs/
http://gulf.santifjobs.com/?gclid=CL_Xlae8vKgCFYZVHAodDCXzDA
http://www.jobsinqatar.net/
www.reedglobal.com.qa/jobseeker
qatar.monstergulf.com/
www.jobsinqatar.org/
www.onlineqatar.com/jobs/
aljazeerajobs.com/jobs/jobs-in-qatar.html

3. Կրթությունը Քատարում

ա) Ընդհանուր տեղեկություններ

Քատարում միասնական կրթական համակարգը սկսել է ձևավորվել անցյալ դարի երկրորդ կեսից: Մինչ այդ տղաները և աղջիկները սովորում էին ավանդական դպրոցներում, որտեղ ուսանում էին տարբեր առարկաներ՝ առանց համակարգված մոտեցման: Ներկայումս Քատարում գործում է պարտադիր և շարունակական կրթական համակարգ՝ ապահովելով հավասար հնարավորություններ բոլորի համար: Ներկայումս Քատարում գրագիտության մակարդակը կազմում է 85 տոկոս:

Քատարի կրթական համակարգը բաղկացած է հետևյալ մակարդակներից՝

Տարրական մակարդակ – տևողությունը 6 տարի է, այն անվճար է բոլոր քաղաքացիների համար
Նախապատրաստական մակարդակ - տևողությունը 3 տարի է
Միջնակարգ մակարդակ - տևողությունը 3 տարի է

Տարրական և նախապատրաստական մակարդակներում սովորում են գրաճանաչություն և թվաբանություն, իսկ նախապատրաստական մակարդակում աշակերտներին պատրաստում են համալսարան ընդունվելու համար, կամ ուսուցանում են տեխնիկական կամ

արհեստագործական հմտություններ՝ անմիջապես աշխատանքի տեղավորվելու նպատակով:

Քատարում տղաները և աղջիկները սովորում են առանձին դպրոցներում: Կան պետական դպրոցներ, որտեղ անվճար սովորում են օտարերկրյա քաղաքացիների երեխաները: Կան նաև մասնավոր դպրոցներ, ինչպես նաև մասնավոր դպրոցներ տարբեր արաբական, հնդկական և ամերիկյան համայնքների համար:
Բարձրագույն կրթության հիմքը Քատարում դրվել է 1985 թվականին՝ Քատարի համալսարանի բացման հետ: Այն ունի Կրթության, Հասարակագիտության, Գիտությունների, Իսլամական ուսուցման, Ճարտարագիտության տնտեսագիտական և վարչարարության և Տեխնոլոգիաների ֆակուլտետներ, որոնք իրենց հերթին ունեն տղաների և աղջիկների մասնաճյուղեր: Համալսարանն ունի 8000 ուսանող: Քատարի շատ քաղաքացիներ, հատկապես՝ տղամարդիկ, ուսանում են ԱՄՆ-ում և ՄԹ-ում:
Քատարում շատ են մասնավոր քոլեջները, հատկապես՝ կին ուսանողների համար:
Քատարի ուսումնական հաստատություններում առարկաները դասավանդվում են արաբերեն լեզվով: Անգլերեն լեզուն դասավանդվում է, որպես օտար լեզու: Կրթության և մշակույթի նախարարությունը որոշել է անգլերեն լեզվի ուսուցումը սկսել տարրական դասարաններից:
Համալսարական կրթությունը Քատարում ունի երկու աստիճան: Առաջինը բակալավրի աստիճանն է, երկրորդը՝ հետբուհական դիպլոմ:
Արտասահմանցի ուսանողների համար բուհերում հատկացվում է տեղերի 10-25 տոկոսը: Ընդունվելու համար անհրաժեշտ է ունենալ միջնակարգ կրթության վկայական և դիմել ընդունելությունից առնվազն 6 ամիս առաջ: Կրթաթոշակով ընդունված ուսանողներն օգտվում են նաև այլ ծառայություններից: Դիմորդը պետք է ունենա վիզա, կացության կարգավիճակ և առողջական վիճակի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթեր:
Արաբերեն լեզվի լավ իմացությունն անհրաժեշտ է բոլոր ուսանողների համար, բացառությամբ ճարտարագիտական, կենսաբժշկական և բուժքույրական ֆակուլտետներից, որտեղ ուսուցումն իրականացվում է անգլերեն լեզվով:

բ) Բուհական և հետբուհական կրթաթոշակներ

http://keefo.net/showthread.php?8724-[Master]-Master-Scholarships-for-international-students-at-Qatar-Faculty-of-Islamic
http://scholarships.reingex.com/qa.asp

http://www.bitofcloud.com/search/qatar-scholarships-for-international-students-qatar.html
http://scholarshipsupdates.net/2011-scholarships/qatar-scholarship-for-foreign-students/
http://qfis.edu.qa/output/page124.asp

գ) բուհերի և քոլեջների ցուցակ

Քատարի համալսարան
P.O. Box 2713
Դոհա
Հեռ.՝ +974 485 2222
Ֆաքս՝ +971 483 5043
Էլ. փոստ՝ admin@qu.edu.qa
Կայք՝ http://www.qu.edu.qa/main/index.html

Քատար հիմնադրամ
Education City
P.O. Box 5825
Դոհա
Հեռ.՝ + 974 492 7000
Ֆաքս՝ +974 480 1971
Էլ. փոստ՝ info@qf.org.qa
Կայք՝ http://www.qf.org.qa

Virginia Commonwealth University – Քատարի արվեստների դպրոց
P.O. Box 8095
Դոհա
Հեռ.՝ +974 492 7200
Ֆաքս՝ +974 480 5432
Էլ. փոստ՝ vcuqadmissions@qatar.vcu.edu
Կայք՝ http://www.qatar.vcu.edu

Weill Cornell Քատարի բժշկական դպրոց
P.O. Box 24144
Դոհա
Հեռ.՝ +974 492 8650
Ֆաքս՝ +974 492 8444

էլ. փոստ՝ admissons@qatar-med.cornell.edu
Կայք՝ http://www.qatar-med.cornell.edu

Texas A&M համալսարան Քատարում
P.O. Box 23874
Դոհա
Հեռ.՝ +974 423 0010
Ֆաքս՝ +974 423 0011
էլ. փոստ՝ info@qatar.tamu.edu
Կայք՝ http://www.qatar.tamu.edu

Carnegie Mellon համալսարան Քատարում
P.O. Box 24866
Դոհա
Հեռ.՝ +974 492 8260
Ֆաքս՝ +974 492 8255
էլ. փոստ՝ ug-admission@qatar.cmu.edu
Կայք՝ http://www.qatar.cmu.edu

Georgetown University – Օտարերկրյա ծառայությունների դպրոց Քատարում
Liberal Arts and Science (LAS) Building
P.O. Box 23689
Դոհա
Հեռ.՝ +974 492 7652
Ֆաքս՝ +974 482 6868
էլ. փոստ՝ SFSQadmissions@georgetown.edu
Կայք՝ http://www1.georgetown.edu/sfs/qatar/

Քատարի օդագնացության քոլեջ
RasAbuAboud Street
P.O. Box 4050
Դոհա
Հեռ.՝ +974 440 8888
Ֆաքս՝ +974 435 7034
էլ. փոստ՝ qacadmn@qatar.net.qa
Կայք՝ http://www.qac.edu.qa

College of the North Atlantic – Հիմնական կրթահամալիր Քատարում
P.O. Box 24449
68 Al Tarafa, Duhail North,
Դոհա
Հեռ.՝ +974 495 2222
Ֆաքս՝ +974 495 2200
Էլ. փոստ՝ info@cna-qatar.edu.qa

Rayyan Campus
P. O. Box 24449
Al Forousiya ճանապարհ
Դոհա
Հեռ.՝ +974 482 5555
Ֆաքս՝ +974 482 5500
Էլ. փոստ՝ info@cna-qatar.edu.qa
Կայք՝ http://www.cna-qatar.edu.qa

CHN մասնագիտական կրթության համալսարան Քատարում
Al Jelaiat փողոց
P.O. Box 36037
Դոհա
Հեռ.՝ +974 488 8116 & +974 488 8126
Ֆաքս՝ +974 488 8136
Էլ. փոստ՝ chnqatar@qatar.net.qa
Կայք՝ http://www.chn.nl/default.asp?objectID=725

ASPIRE – Սպորտի ակադեմիա
P.O. Box 22287
Դոհա
Հեռ.՝ +974 413 6000
Ֆաքս՝ + (974 4136060
Էլ. փոստ՝ communications@aspire.qa
Կայք՝ http://www.aspire.qa

4. Ապաստանի տրամադրման ընթացակարգը

Քատարի կառավարությունը ապաստանի վերաբերյալ որևէ սահմանված ընթացակարգ չունի: Այն անձինք, ովքեր փորձում են անօրինական ճանապարհով մուտք գործել երկիր, ներառյալ հարևան երկրների դասալիքները, մերժվում են մուտք գործել Քատար: Այն փախստականները, ովքեր կկարողանան հովանավոր կամ աշխատանք գտնել, մուտքի թուլտվություն կստանան: Սակայն, աշխատանքից ազատվելուց հետո նրանք պետք է հեռանան երկրից, այլապես՝ կվտարվեն:

Փախստականները Քատարում գտնվում են նույն վիճակում ինչ-որ օտարերկրյա աշխատողները: Քատարում աշխատելու համար շատ դժվար է ձեռք բերել աշխատանքային պայմանագիր և առավել ևս պահպանել այն, քանի որ պայմանագիրը կնքվում է տեղացի հովանավորի կամ գործատուի հետ, որը ցանկացած պահի, իր քմահաճույքով կարող է լուծել պայմանագիրը: Ավելին, աշխատանքային պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է աշխատանքային վիզա, սակայն, աշխատանքից հեռացվելուց հետո այդ վիզան հնարավորություն չի տալիս մնալ Քատարում:

Քատարի կառավարությունը 1980 թվականից որդեգրել է տնտեսության բոլոր ճյուղերում աշխատելու համար առաջնությունը Քատարի քաղաքացիներին տալու քաղաքականությունը:

5. Առողջապահական համակարգը

Քատարում առողջապահական համակարգից կարող են օգտվել բոլորը՝ քաղաքացիները, տուրիստները, փախստականները և այլն: Քատարի առողջապահական ծառայություններն անվճար են կամ սուբսիդավորված և՝ գերազանց որակի:
Չնայած բուժօգնությունն անվճար է, սակայն տուրիստը կամ օտարերկրյա քաղաքացին պետք է վճարի որոշակի բժշկական ծառայությունների համար: Ուստի ցանկալի է, որ երկիր մուտք գործելիս նրանք ունենան միջազգային բժշկական ապահովագրություն:

Առաջին հիվանդանոցը Քատարում բացվել է ընդամենը 50 տարի առաջ, և այս ընթացքում առողջապահական համակարգը բավական զարգացել է:

Ներկայումս Քատարում կան 9 հիվանդանոցներ, որոնցից 5-ը պետական են, իսկ 4-ը՝ մասնավոր: Հիմնական հիվանդանոցներն են՝ Համադի հիվանդանոցը, Ալ Ամալ հիվանդանոցը և Ռումայլլահ հիվանդանոցը:

Շտապ բուժօգնության համակարգը զարգացել է 2002 թվականից սկսած և այժմ այն հասանելի է ողջ երկրի տարածքում: Շտապ բուժօգնության համակարգի աշխատանքն արդյունավետ դարձնելու համար շտապ բուժօգնության ծառայությունները արբանյակային կապով միացած են Համադ հիվանդանոցին:

Քատարում դեղերի արտադրության և վաճառքի վերահսկումն իրականացվում է միջազգային չափորոշիչներին համապատասխան: Քատարում շատ են դեղատները, կան նաև այնպիսիք, որոնք աշխատում են մինչև ուշ գիշեր:

Այն անձինք, ովքեր չեն դիմանում ամառային շատ բարձր ջերմաստիճանին, կարող են արևահարվել կամ արևայրուք ստանալ, քանի որ հաճախ ջերմաստիճանն անցնում է 50°C.
Զրազրկում և շնչուղիների խնդիրներ ևս ծագում են՝ կապված օդում ավազի և փոշու առկայության հետ:

6. Սոցիալական ապահովության համակարգը

Քատարում սոցիալական ապահովության համակարգը գործում է միայն Քատարի քաղաքացիների համար: Եթե սովորում կամ աշխատում եք Քատարում, ապա սոցիալական ապահովության երաշխիքներ ունենալ չեք կարող:

7. Բնակարանների վարձակալություն

Որոնումների կայքեր՝

www.mycoreo.com
www.maroonhomes.com
www.qatarairways.com/global
www.qatarliving.com/discussion/housing-costs-17feb2006
www.qatar.alloexpat.com/qatar_information/housing_in_qatar.php

www.justlanded.com/english/Qatar/Housing-Rentals
www.qatarpropertyplanet.com/
www.expatriates.com/classifieds/qat/hs/
www.qatarhousing.net/
www.sublet.com/state_rentals/qatar_rentals.asp
www.qatarvisitor.blogspot.com/
www.alemadi.com.qa

8. Դիպլոմների ճանաչում

Քատարում դիպլոմների ճանաչմամբ զբաղվում են Քատարի Ակադեմիայի հոգաբարձուների խորհուրդը և Քատարի կրթության, գիտության և համայնքային զարգացման հիմնադրամը /P.O. Box 80, Դոհա/:
Քատարում Միջազգային բակալավրիատի դիպլոմը հավատարմագրված է որպես միջնակարգ կրթության ավարտական վկայական և համարժեք է Քատարի միջնակարգ կրթության վկայականին:

Անհրաժեշտ է բավարարել հետևյալ պայմանները՝

1. Տասերկու տարվա կրթություն՝ Քատարի կրթական համակարգին համապատասխան
2. Քննություններն անցկացվում են Քատարի Պետության կողմից հավատարմագրված և ճանաչված ինստիտուտներում
3. Ուսանողների անցած առարկաները նույնն են, ինչ-որ Քատարի ընդհանուր միջնակարգ դպրոցի վկայականում նշված առարկաները:

9. Օգտակար խորհուրդներ Քատար մեկնողների համար

Հագուստը

Քատարում հագուստի ընտրությունն ավելի ազատ է, քան հարևան արաբական երկրներում: Հիմնականում պետք է ուսերը փակ պահել և խուսափել շատ կարճ հագուստից: Որովայնը բացելը իրավախախտում է համարվում և կարող է լուրջ խնդիրներ առաջացնել Ձեզ համար:

Մանրամասն տեղեկությունների համար տես՝

http://www.qatarvisitor.com/index.php?cID=412&pID=985

Ալկոհոլ

Քատարում ալկոհոլային խմիչքներ կարելի է գնել հյուրանոցների բարերից կամ Քատարի մատակարարման կենտրոնից հատուկ թույլտվությամբ՝ Ձեր եկամուտի 10 տոկոսի արժողությամբ: Տանից կամ հատուկ նախատեսված վայրերից դուրս խմելն արգելված է օրենքով: Եթե խմած վիճակում որևէ անկարգություն անեք կամ անհանգստություն պատճառեք որևէ մեկի, շատ մեծ խնդիրներ կունենաք:

Մանրամասն տեղեկությունների համար տես՝
http://www.qatarvisitor.com/index.php?cID=414&pID=1053

Զվարճանքի վայրեր

Քատարում կան բարեր և հյուրանոցային ակումբներ, որտեղ կարելի է խմել և պարել, սակայն դրանք հեռու են խոշոր քաղաքների չափորոշիչներից:
Շատ են կինոթատրոնները, որտեղ ցուցադրվում են արաբական և արևմտյան ֆիլմեր: Կան նաև սահադաշտեր և բոուլինգի ակումբներ:
Քատարում կա մեկ ազգային թատրոն, որն այնքան էլ ակտիվ չէ և մեկ սիրողական թատրոն՝ «Դոհայի արտիստներ» անվամբ, որը բավական ակտիվ է:
Կարելի է նաև նստել սրճարաններում՝ բարձերին հենված, և վայելել սև սուրճ նարգիլեով:

Մանրամասն տեղեկությունների համար տես՝
http://www.qatarvisitor.com/index.php?cID=415&pID=1067

Եղանակը

Քատարում ծայրահեղ շոգ է, հատկապես՝ հուլիս և օգոստոս ամիսներին, երբ նույնիսկ օդորակիչներն իվիճակի չեն մեղմել շոգը: Պարադոքս է, բայց երբեմն քաղաքում ավելի շոգ է լինում, քան այն շրջապատող անապատում:
Սակայն ջերմաստիճանն ընկնում է դեկտեմբեր և հունվար ամիսներին և եղանակը նույնիսկ զով է լինում:

Մանրամասն տեղեկությունների համար տես՝
http://qatarvisitor.blogspot.com/2007/01/desert-cold.html

Բնակչությունը

Քատարի քաղաքացիները Քատարի Պետությունում փոքրամասնություն են կազմում: Բնակչության 70 տոկոսը աշխատավոր միգրանտներ են Հնդկաստանից, Պակիստանից, Շրի-Լանկայից, Ֆիլիպիններից, Մալազիայից, Նեպալից և այլն:

Կրոնը

Քատարը իսլամական պետություն է, որի բնակիչները մոլեռանդ հավատացյալներ են: Եթե փորձեն Ձեզ դարձնել մուսուլման, մի վիրավորվեք, քանի որ ըստ իրենց՝ «նրանք մտածում են Ձեր հոգու փրկության մասին»: Չնայած կրոնափոխ անելու փորձի կամ քարոզչության համար Ձեզ կարող են արտաքսել երկրից, Քատարում գործում է խղճի ազատությունը և Դուք կարող եք շատ եկեղեցիներ տեսնել այնտեղ:

Անվտանգությունը

Քատարը ապահով երկիր է՝ հանցավորության ծայրահեղ ցածր մակարդակով:

10. Միգրանտներին աջակցող ծառայություններ

ՀՀ դեսպանություն
Արաբական Միացյալ Էմիրություններ
Աշխատանքային օրեր եւ ժամեր՝ Երկ, Երք, Չրք, Հնգ, Ուրբ | ժ. 09:00-18:00
Նստավայր՝ Abu Dhabi, UAE
Հասցե՝ Embassies District (al-Safarat), 24 Al Karamah Str., Zone 2, P. O. Box Number: 6358,
Հեռ.՝ (9712) 4444196, 4444128
Ֆաքս՝ (9712) 4444197
Էլ. փոստ՝ armemiratesembassy@mfa.am

Քատարի Պետության դեսպանություն
Նստավայր՝ Թեհրան, Իրան
Հասցե՝ 4, Golazin Str., Afrigha Expressway
Հեռ.՝ (98-21) 22051255, 22051256, 22029336, 22029337
Ֆաքս՝ (98-21) 22058478
Էլ. փոստ՝ qatarembir@hotmail.com
Ազգային տոն՝ 03 Սեպտեմբերի

Քատարի Պետությունն անդամակցում է Միավորված ազգերի կազմակերպությանը և հանդիսանում է Միգրացիայի միջազգային կազմակերպության դիտորդ անդամ: Ստորև ներկայացված են Քատարի Պետության նախարարությունների և Քատարում գործող ազգային և միջազգային կազմակերպությունների հասցեները, որոնց աշխատանքային միգրանտը կարող է դիմել անհրաժեշտության դեպքում:

Ներքին գործերի նախարարություն
Կայք՝ moi.gov.qa

Արտաքին գործերի նախարարություն
Կայք՝ mofa.gov.qa

Կրթության նախարարություն
Կայք՝ moe.edu.qa

Արդարադատության նախարարություն
Կայք՝ moj.gov.qa

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Կայք՝ mol.gov.qa

Քատարի բարեգործական ընկերություն
ECOSOC հատուկ խորհրդատվական կարգավիճակ
P.O. Box 1224
Դոհա
Հեռ.՝ 974-466-7711; 974-466-7733
էլ. փոստ՝ qcharity@qcharity.org

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային կոմիտե
Հեռ՝ +974 4444012
Ֆաքս՝ +974 4444013
էլ. փոստ՝ nhrc@qatar.org.qa
Կայք՝ www.nhrc-qa.org

Քատարի Կարմիր Մահիկի ընկերություն
Հասցե՝ P.O. Box 5449
Դոհա
Հեռ.՝ (00974) 4435111
Ֆաքս՝ (00974) 4439950
Էլ. փոստ՝ info@qrcs.org.qa
Կայք՝ http://www.qrcs.org

UNESCO –ի գրասենյակ Դոհայում
66, Լուսաիլ փողոց - արևմտյան ափ
P.O. Box 3945
Էլ. փոստ՝ doha(at)unesco.org
Հեռ.՝ +974 4411 3290; +974 4411 3293; +974 4411 3295; +974 4411 3036
Ֆաքս՝ +974 4411 3015

UNICEF–ի գրասենյակ Դոհայում
57, Ալ-Ջազիրա Ալ-Արաբիա փողոց
Հեռ.՝ +974 486.77.07/8
Էլ. փոստ՝ riyadh@unicef.org